

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԹՈՒՄՈՒՄ 1918 Թ. ՀՈՒԼԻՍԻՆ

Համո Սուքիասյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4

Էլ. հասցե՝ hamosukiasyan@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 30.01.2020, գրախոսվել է 30.01.2020, ընդունվել է
տպագրության 30.04.2020

Ներածություն

1918 թ. մայիսին Հայաստանի անկախության վերականգնման և պետականության ամրապնդման գործընթացի առանցքային խնդիրներն ուսումնասիրելիս հնարավոր չէ շրջանցել հայ-թուրքական հարաբերությունների հարցը: Այդ պատճառով էլ Հայաստանի Հանրապետության առաջին շրջանի (1918 թ. մայիս-հոկտեմբեր) վերաբերյալ ուսումնասիրություններ կատարած պատմաբաններն այս կամ այն չափով անդրադարձել են Օսմանյան կայսրության հետ ՀՀ հարաբերություններին, հայկական տարածքների նկատմամբ թուրքերի զավթողական քաղաքականությանը:

Եթե 1918 թ. մայիս-հունիսին Բաթումում և հունիս-հոկտեմբերին Կ. Պոլսում Օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության միջև անցկացված բանակցություններին առնչվող հարցերը քննության է առել պատմաբանների մի քանի սերունդ, ապա նույն 1918 թ. հուլիսի սկզբին Բաթումում տեղի ունեցած հայ-թուրքական բանակցությունները պատմաբանները համապատասխան ուշադրության և գիտական ուսումնասիրության չեն արժանացրել: Բաթումի հայ-թուրքական երկրորդ բանակցությունների վերաբերյալ եղած աղքատագիտական նյութը սակավ է, որն էականորեն դժվարացնում է այս խնդրի մանրամասն ուսումնասիրությունը:

Բաթումի հայ-թուրքական պայմանագիրը փոփոխելու փորձերը

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Հայաստանի Հանրապետության հետ կնքված «հաշտության և բարեկամության» պայմանագրի և դրան կից լրացուցիչ արձանագրությունների համաձայն՝ Օսմանյան կայսրությունը ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Թուրքերը բռնազավթեցին հայության կենսական տարածքների մեծ մասը. փաստացի ՀՀ-ին էր մնում Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառը և տարածքներ Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Երևանի և Շարուր-Ղարալագյազի

գավառներից¹: Նույն օրը Օսմանյան կայսրությունը հաշտության պայմանագրեր ստորագրեց նաև նորանկախ Վրաստանի և Ադրբեջանի հետ: ՀՀ պատվիրակության՝ Բաթումից Թիֆլիս վերադառնալուց հետո Հայոց ազգային խորհուրդը ձեռնամուխ եղավ հանրապետության խորհրդարանի և կառավարության ձևավորմանը:

Բաթումում Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հետ Օսմանյան կայսրության կնքած պայմանագրերը քննարկվում էին Բեռլինում և Վիեննայում: Թուրքերի դաշնակիցներ Գերմանական և Ավստրո-Հունգարական կայսրությունների համար անընդունելի էր, որ նշյալ ակտերը կատարվել էին առանց իրենց մասնակցության: Ուստի որոշվեց հունիսի 25-ին Կոստանդնուպոլսում Քառյակ դաշինքի երկրների (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա և Օսմանյան կայսրություն) և Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Լեռնականների պետության մասնակցությամբ նոր խորհրդաժողով գումարել, որտեղ վերաքննվելու էին Բաթումում ստորագրված պայմանագրերը: Ըստ այդմ՝ հայերը հույս ունեին, որ թուրքերն ստիպված էին լինելու կատարել խորհրդային Ռուսաստանի և Քառյակ դաշինքի երկրների միջև 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում ստորագրված պայմանագրի դրույթները (այն առավել բարենպաստ էր, քան Բաթումի պայմանագիրը)²:

1918 թ. հունիսի 9-ին Հայոց ազգային խորհուրդը Խալիլ փաշայից հրավեր է ստանում մասնակցելու Կ. Պոլսի կոնֆերանսին: Խորհրդի՝ հունիսի 12-ի նիստում որոշվեց Ավետիս Ահարոնյանի նախագահությամբ (անդամներ՝ Ալեքսանդր Խատիսյան, Միքայել Պապաջանյան) պատվիրակություն ուղարկել օսմանյան մայրաքաղաք³: Հունիսի 13-ին հայկական պատվիրակության հիմնական կազմը մեկնում է Թիֆլիսից և հունիսի 19-ին հասնում Կ. Պոլիս, իսկ մյուս մասն այստեղ է ժամանում հունիսի 24-ին: Պատվիրակության անդամները հույս ունեին կոնֆերանսի ընթացքում հասնել հայության օրհասական դրության բարելավմանը և հանրապետության սահմանների ընդարձակմանը⁴: Կ. Պոլսում մնալով մինչև նոյեմբերի 1-ը՝ հայկական պատվիրակությունը բազմաթիվ հանդիպումներ է ունենում թուրք բարձրաստիճան պաշտոնյաների, օտարերկրյա դիվանագետների հետ, սակայն այդպես էլ որոշակի արդյունքի չի հասնում, իսկ կոնֆերանսը ձգձգվելուց հետո այդպես էլ չի գումարվում թուրք-գերմանական հակա-

¹ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 36-40:

² Ավետիսյան 1997, 258:

³ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 253-254:

⁴ Խատիսեան 1968, 99:

սությունների և ռազմաճակատներում Քառյակ դաշինքի երկրների բանակների պարտության պատճառով⁵:

Հայ բնակչության դրությունը

Բուն Անդրկովկասում թուրքերն ամենատարբեր պատրվակներով խախտում էին Բաթումի՝ իրենց կողմից պարտադրված պայմանագրի դրույթները: Ճանապարհների փակ, անապահով լինելը, փոստի և հեռագրի բացակայությունը, երկաթուղային կապի խափանումը դժվարացնում էին հայ ղեկավար գործիչների՝ Թիֆլիսից Երևան տեղափոխվելու հնարավորությունը: Բացի այդ, թուրքական ռազմակալման ներքո գտնվող տարածքներում հայ բնակչությունը պարբերաբար բռնությունների, թալանի, ջարդերի էր ենթարկվում⁶:

Առանձնապես վատթար դրության մեջ էին Ախալքալաքի գավառի հայ գաղթականները, որոնց հիմնական մասն ապաստանել էր Բակուրիանիում: Հայոց ազգային խորհուրդն առաջնային խնդիր էր համարում Ախալքալաքի գաղթականներին սեփական բնակավայրեր վերադարձնելը՝ նրանց ֆիզիկական գոյությունն ապահովելու նպատակով: Հունիսի երկրորդ կեսին այդ նպատակով Ազգային խորհրդի և ախալքալաքի գաղթականների ներկայացուցիչների կողմից մի շարք դիմումներ էին ուղղվել Բաթումում ու Ախալքալայում գտնվող թուրք զորահրամանատարներին, սակայն դրական պատասխան չէր ստացվել: Հետևաբար հայ գործիչների շրջանում համոզմունք էր ձևավորվել, որ թուրքական հրամանատարությունը փաստացի դեմ է գաղթականների վերադարձին⁷:

Բաթում մեկնող պատվիրակության կազմակերպումը, նրանց պարտականությունների սահմանումը

Հայաստանի Հանրապետության իշխանությունների համար առաջնային խնդիր էր թուրքական կողմի իրական մտադրություններին տեղյակ լինելը, մանավանդ որ Կ. Պոլսի խորհրդաժողովի բացումը ձգձգվում էր: Պոլսի հայկական պատվիրակության անդամ Միքայել Պապաջանյանը (վերջինս ուշացումով միացավ գործընկերներին) օսմանյան մայրաքաղաք ուղևորվելու ճանապարհին կարճ զրոյց է ունենում Կովկասյան ճակատի օսմանյան բանակների հրամանատար Վեհիբ Մեհմեդ փաշայի հետ: Հանդիպման մանրամասների վերաբերյալ Մ. Պապաջանյանը նամակով տեղեկացնում է Հայոց ազգային խորհրդին. նամակն ընթերցվում է խորհրդի հունիսի 29-ի նիստում: Համոզմունք հայտնելով, որ ժամանակի ընթաց-

⁵ Սուփասյան 2015, 193-195:

⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 49:

⁷ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 269 շրջ., Մելքոնյան 2003, 289-292:

քում կողմերի միջև բարիդրացիական հարաբերություններ կստեղծվեն՝ թուրք զորահրամանատարը տեղեկացրել էր, որ թուրքական զորքերին կարգադրել է կարգ ու կանոն պահպանել, իսկ կատարված անօրինակա- նությունները քննվում են: Ըստ նրա՝ սահմանների խնդիրը վերջնական լուծում է ստանալու Կ. Պոլսում, իրենց զորամասերը հայ-վրացական սահ- մանագծում պահում են վրաց-գերմանական զորամասերի առաջխաղա- ցումը բացառելու նպատակով: Նա խոստացել էր երեք ավտոմոբիլ հաս- կացնել Հայոց ազգային խորհրդի անդամներին Ալեքսանդրապոլով Երևան մեկնելու համար, իսկ ռազմական համագործակցության դեպքում՝ նաև դրամական աջակցություն տրամադրել ՀՀ-ին: Գաղթականների խնդրի վերաբերյալ էլ հայտարարել էր, որ կողմնակից է սեփական բնա- կավայրերը նրանց վերադառնալուն: Ըստ այդմ էլ՝ Մ. Պապաջանյանը Հայոց ազգային խորհրդին առաջարկում էր ներկայացուցիչներ ուղարկել Բաթում՝ այդ հարցով բանակցություններ վարելու նպատակով⁸: Այս առա- ջարկն առիթ էր, որ Հայոց ազգային խորհուրդը պատվիրակություն կազ- մակերպի՝ գաղթականության հարցը և հայ-թուրքական հարաբերություն- ներում առկա մյուս խնդիրները քննարկելու նպատակով:

ՀՀ պատվիրակության ղեկավար է նշանակվում Հայոց ազգային խորհրդի անդամ, Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Սամսոն Հարությունյանը, անդամներ՝ բանաստեղծ Հովհաննես Թուման- յանը և գեներալ Իվան Բաղդամյանը, քարտուղար-թարգմանիչ՝ Երվանդ Միրզոյանցը: Այս ընթացքում Կովկասյան ճակատի օսմանյան բանակների հրամանատարի պաշտոնում Վեհիբ փաշային փոխարինում է ավագ եղ- բայրը՝ Էսսադ փաշան: Վերջինի նշանակումը Հայոց ազգային խորհրդի անդամների մեջ թույլ հույս է առաջացնում, թե հնարավոր կլինի թուրքե- րին համոզել՝ գոնե հետևելու հայության համար չարաբաստիկ դրույթներ պարունակող Բաթումի պայմանագրի կետերին, վերջ տալու չափ ու սահ- ման չունեցող անօրինություններին:

Կարծում ենք, պատվիրակության կազմում Հովհ. Թումանյանին ընդ- գրկելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ վերջինս մի քանի օր առաջ (հունիսի 23-ին) էր վերադարձել Դսեղից, քաջաճանոթ էր Լոռիում և շրջակայքում թուրքերի բարբարոսություններին ու նաև, իբրև ականատես, կարող էր ներկայացնել իրական դրությունը: Չմոռանանք, որ Հայոց ազ- գային խորհրդի՝ հունիսի 24-ի նիստում Թումանյանն ընդարձակ զեկուցում էր ներկայացրել Լոռիում տիրող իրավիճակի մասին⁹: Բացի այդ, բանաս- տեղծը հայտնի էր իր խաղաղասիրական քայլերով, տարածաշրջանի ժո- ղովուրդների խաղաղ համակեցության վերաբերյալ իր երկարամյա քա-

⁸ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 273 շրջ.:

⁹ Սուքիասյան 2009, 143-146:

րոզներով: Բնականաբար, այս փաստի մասին պետք է հայտնի լիներ նաև թուրքական հրամանատարությանը: Դրանով պայմանավորված՝ Թումանյանի խոսքերը ոչ միայն միակողմանի չէին թվա, այլև համոզիչ կարող էին լինել թուրք զորահրամանատարի համար:

Հայոց ազգային խորհուրդը պատվիրակության առջև խնդիր էր դրել էսսադ փաշայի հետ քննարկել Բաթումի պայմանագրով որոշված՝ ՀՀ սահմաններից (մասնավորապես Հարավային Լոռուց) օսմանյան զորքերի դուրսբերման (հետևաբար՝ հանրապետության փաստացի սահմանների ընդարձակման), երկաթուղագիծը ՀՀ-ին փոխանցելու, հայ գաղթականների՝ սեփական բնակավայրեր վերադառնալու անվտանգության երաշխիքներ տալու, հայ բնակչության նկատմամբ թուրքական զորամասերի կատարած բարբարոսությունների, նաև երկկողմ առևտրական հարաբերություններ սկսելու հարցերը¹⁰:

Ժամանակակիցներից Աստվածատուր Խաչատրյանը գրում է, որ Ս. Հարությունյանի ղեկավարած պատվիրակությունը Թիֆլիսից Բաթում է մեկնել 1918 թ. հունիսի 29-ին, իսկ հուլիսի 2-ին հուշագիրն է ներկայացրել էսսադ փաշային¹¹: Թիֆլիս վերադառնալուց հետո՝ հուլիսի 6-ին, Ազգային խորհրդի նիստում ներկայացրած հաշվետու զեկույցում Ս. Հարությունյանը հայտնում է, որ Բաթում հասնելու հաջորդ օրը հանդիպել են էսսադ փաշային¹²: Ստացվում է, որ հայկական պատվիրակությունը Բաթում է հասել հուլիսի 1-ին: Այս ամսաթիվն է նշում նաև թումանյանագետ Լուսիկ Կարապետյանը: Հիմնվելով «Кавказское слово» թերթի վրա՝ վերջինս գրում է, որ բանաստեղծը «հուլիսի 1-ին մեկնում է Բաթում՝ Ազգային խորհրդի հունիսի 29-ի որոշմամբ»¹³:

Պատվիրակության ճանապարհորդությունը ոյուրին չի եղել, քանի որ նախօրոք թուրքական հրամանատարությանը տեղյակ չէր պահվել ՀՀ պատվիրակության ժամանման օրվա մասին: Ս. Հարությունյանի խոսքերով՝ պատվիրակությունը Բաթում է հասել «մեծ դժվարություններով»¹⁴: էսսադ փաշան հայ պատվիրակներին չափազանց ջերմ, շողորձորթ ընդունելության է արժանացրել, համակրանքով է արտահայտվել հայ ժողովրդի մասին՝ առաջին հայացքից զարմանք պատճառելով նրանց:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 49, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289, Հորիզոն, Թիֆլիս, 9 յուլիսի 1918, N 133, Кавказское слово, Тифлис, 2 июля 1918, N 134.

¹¹ Խաչատրյան 2010, 105:

¹² ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289:

¹³ Կարապետյան 1992, 216: Հեղինակը սխալմամբ պատվիրակության քարտուղարի անունը «Է. Միրզոյան» է գրում:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289:

Բանակցությունները Բաթումում

Հայաստանի ազգային արխիվում չհաջողվեց հայտնաբերել հայկական պատվիրակության՝ Էսսադ փաշային հանձնած երկու հուշագրերը: Ա. Խաչատրյանի վկայությամբ՝ Բաթումի պայմանագիրը վկայակոչելով, առաջին հուշագրում պահանջ էր դրվում թուրքական զորքերից դատարկել Փամբակը, Ալեքսանդրապոլի գավառից ՀՀ-ին մնացած մասը, Լոռու հարավային մասը, Քոլագիրան կայարանը և տարածքներ Երևանի գավառից, վերականգնել երկաթուղային հաղորդակցությունը, գաղթական հայ բնակչությանը (հատկապես Ախալքալաքի հայությանը) թույլատրել վերադառնալ հայրենի բնակավայրեր: Երկրորդ հուշագրում, ի հավելումն այս հարցերի, խոսվում էր Ղարաքիլիսայում թուրքերի կատարած ջարդերի, թալանի, բռնությունների մասին¹⁵:

Ձերմ ընդունելությանը հակառակ՝ Էսսադն ամեն կերպ խուսափում է լուծում տալ հայ պատվիրակների առաջ քաշած հարցերին: Նրա հիմնական փաստարկն այն էր, որ բոլոր խնդիրները վերջնական լուծում կստանան Պոլսի խորհրդաժողովում: Էսսադը կեղծավորաբար հայտարարում է, թե իրենք կողմնակից են ՀՀ տարածքի ընդարձակմանը, և «եթե այժմ մեր զորքերը գրաւել են որոշ տեղեր, այդ եղել է ձեր օգտին, որովհետև գերմանո-վրացական զորքերը ուզում են գրաւել»¹⁶: Նա պատրաստակամություն է հայտնում Բաթումի պայմանագրով ՀՀ-ին պատկանող տարածքներից օսմանյան զորքերը հեռացնել Հայաստանի և Վրաստանի միջև միջպետական սահմանագծի հստակեցումից հետո¹⁷: Իսկ Ա. Հարությունյանի առաջարկին՝ «աւելի լաւ է դուք ձեր զորքերը յետ քաշէք, մենք մեր զորքերով կպահենք մեր սահմանները, եթէ չկարողանանք, կդիմենք ձեր օգնութեան՝ իբրև բարեկամ պետութեան», հայտարարում է, թե չի հավատում, թե հայերին դա կհաջողվի¹⁸: Փաստորեն, հայկական տարածքներից օսմանյան զորքերի դուրսբերման հարցի հետ առկախ էր մնում նաև երկաթուղին հայկական կողմին փոխանցելու խնդիրը:

Առավել մանրամասն քննարկվել է հայ գաղթականների՝ սեփական բնակավայրեր վերադարձի հարցը: Մասնավորապես անմխիթար էր Ախալքալաքի գավառի գաղթականների դրությունը: Այս հարցի առնչությամբ Էսսադը կարծիք է հայտնում, թե տեղահանված հայերը կարող են վերադառնալ միայն այն շրջաններ, որտեղ նրանց ու մուսուլմանների միջև բախումներ չեն եղել: Գաղթականների վերադարձն այն տարածքներ, որտեղ ազգամիջյան հարաբերությունները դեռևս լարված են, նա աննպա-

¹⁵ Խաչատրյան 2010, 104-105:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289 և շրջ.:

¹⁷ Кавказское слово, 7 июля 1918, N 139, Մշակ, Թիֆլիս, 9 յուլիսի 1918, N 131:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289 շրջ.:

տակահարմար է համարել՝ հայտարարելով, որ դա կարող է տեղի ունենալ միայն ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների վերականգնումից հետո¹⁹: Եվ որ ամենագարմանալին է, ազգամիջյան հակասությունների համար թուրք փաշան մեղադրել է հայկական կողմին՝ շեշտելով, թե այդ պայմաններում «առայժմ չի երաշխաւորում ապահովութիւն տեղական մահմեդականների վրէժխնդրութիւնից, ուստի պէտք է առժամանակ սպասել»²⁰: Նա պատրաստակամութիւն է հայտնել միայն Ալեքսանդրապոլի և Կարսի գաղթականներին անհատապէս թույլատրել անձնական գործերով հայրենի բնակավայրեր այցելել²¹:

Այս ամենից հետո սպասելի է, որ Էսսադը պետք է կտրականապէս ժխտեր հայ բնակչության նկատմամբ թուրքական զորամասերի կատարած ջարդերի ու թալանի ակնհայտ փաստերը: Եվ սա այն դեպքում, երբ այդ մասին արտահայտվում էր Լոռու շրջանում թուրքական ոճրագործություններին քաջատեղյակ, այդ օրերին տարածաշրջանում եղած Հովհ. Թումանյանը: Բանաստեղծը սեփական աչքերով էր տեսել հայ գաղթականների անմխիթար դրությունը, թուրքերի իրականացրած համատարած կոտորածն ու թալանը²²: Ավելին, թուրք փաշան ոչ միայն իրականությանը չհամապատասխանող է հայտարարել Ղարաքիլիսայում թուրքերի կատարած եռօրյա ջարդերի մասին հայկական պատվիրակության հուշագիրն ու պատվիրակների հայտարարությունները, այլև, ոչ ավել և ոչ պակաս, առաջարկել է, որ հայկական կողմը, եթե ցանկանում է, կարող է անարգել մարդիկ ուղարկել ոչ միայն Ղարաքիլիսայում, այլև մյուս վայրերում քննություն կատարելու համար՝ փորձելով արտաքուստ տպավորություն ստեղծել, թե կա՛մ թուրքական զազանությունների մասին տեղեկությունները հեռու են իրականությունից, կա՛մ էլ ինքն այդ ամենից անտեղյակ է:

Փոխարենը Էսսադը վկայակոչել է Ղամարլուի շրջանում թուրքական զորամասերի և տեղի հայ բնակչության բախման մասին՝ փորձելով պայմանագրային պարտավորություններին չհետևելու համար ամեն կերպ մեղադրել հայերին²³: Ասվածի համատեքստում կարելի է դիտարկել նաև նրա՝ Բաթումի պայմանագրով Բաքվի առնչությամբ ՀՀ-ի ստանձնած պարտավորության մասին հիշեցումը²⁴: Չիրաժարվելով Բաքվից հայկական զինուժը հեռացնելու պարտավորության կատարումից՝ հայ պատվիրակները միաժամանակ փաստարկված ընդգծել են, որ հայկական զորա-

¹⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 49:

²⁰ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289 շրջ.:

²¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 50, Հորիզոն, 9 յուլիսի 1918, N 133:

²² Հայաստանի անկախության հռչակումը 2009, 91:

²³ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289 շրջ., 290:

²⁴ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289 շրջ.:

մասերի՝ բուլշևիկներին հարելու հարցում մեղքի մեծ բաժին ունեն ադրբեջանցիները. նրանց կողմից ճանապարհները փակելու պատճառով հայ զինվորները զրկվել են հայրենիք վերադառնալու հնարավորությունից, որը բուլշևիկներին հնարավորություն է տվել վարձատրության դիմաց նրանց իրենց ազդեցության տակ առնելու²⁵: Բնականաբար, այստեղ հայ գործիչները խուսափում էին բարձրաձայնել Բաքվի տասնյակհազարավոր հայերի անվտանգության ապահովման նպատակով Հ.Յ. Դաշնակցության և բուլշևիկների միջև գոյություն ունեցող համագործակցության մասին²⁶: Բացառված չէ, որ, հաղորդակցության ուղիների անմխիթար դրությամբ պայմանավորված, այդ համագործակցությանն առնչվող մանրամասներին Թիֆլիսի գործիչները տեղյակ չլինեին:

Իբրև բարի կամքի դրսևորում՝ Էսադ փաշան պատրաստակամություն է հայտնում շրջաբերական ուղղել թուրքական զորամասերին ու բնակչությանը՝ հորդորելով հայերի հետ բարեկամական հարաբերություններ պահպանել²⁷: Նա և իր շտաբի պետ Օմար-Լյուֆթի բեյը հայկական պատվիրակության անդամների վրա կրթված ու բարեհաճ անձանց տպավորություն էին թողել:

Հայկական պատվիրակության բարձրացրած հարցադրումների վերաբերյալ իր դիրքորոշման մասին Էսադ փաշան հեռագիր է ուղարկում նաև Թիֆլիս, որն ընթերցվում է Հայոց ազգային խորհրդի՝ հուլիսի 4-ի նիստում: Հայ գործիչների համար մասնավորապես անսպասելի էր Ախալքալաքի գաղթականների վերադարձի անհնարինության մասին թուրք զորահրամանատարի պնդումը: Ուստի նիստի ընթացքում մանրամասն քննարկվում է հայ գաղթականության օրհասական դրության և օգնության հարցը: Նպատակահարմար է համարվում գաղթականների մի մասին տեղավորել Վրաստանի հայկական գյուղերում, բոլոր հնարավոր միջոցները գործադրել նրանց՝ հայրենի բնակավայրերը վերադարձնելու համար, այս առումով նոր հրահանգներ տալ Կ. Պոլսի հայկական պատվիրակությանը²⁸:

«Հ պատվիրակությունը հուլիսի 4-ին Բաթումից հեռագիր է ուղարկում Կ. Պոլսում գտնվող ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին: Առաջարկվում էր, հաշվի առնելով հանրապետության սահմաններից օսմանյան զորքերի դուրսբերման և երկաթուղագիծը հայկական կողմին վերադարձնելու հրատապությունը, հարցին շուտափոյոթ լուծում տալ օսմանյան մայրաքաղաքում²⁹: Հաջորդ օրը՝ հուլիսի 5-ի երեկոյան, ՀՀ պատ-

²⁵ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 290:

²⁶ Հայոց պատմություն 2010, 165-166:

²⁷ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 289 շրջ., ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 50:

²⁸ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 281 շրջ.-285:

²⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 50:

վիրակությունը վերադառնում է Թիֆլիս, որտեղ և ծանոթանում է Ահարոնյանի պատասխան հեռագրի բովանդակությանը (հեռագիրն օսմանյան բանակների հրամանատարությունը Բաթումից ուղարկել էր Թիֆլիս)³⁰:

Եզրակացություններ

Սամսոն Հարությունյանից, Իվան Բաղրամյանից և Հովհաննես Թումանյանից կազմված պատվիրակության՝ Բաթում առաքելությունը սպասված արդյունքը չունեցավ: Այդուհանդերձ, այն կարևոր էր թուրքական մոտեցումներին, փաստարկներին ու հիմնավորումներին ծանոթանալու տեսակետից: Պատահական չէ, որ Հայոց ազգային խորհրդի նիստում ներկայացրած հաշվետու զեկուցման մեջ Ս. Հարությունյանն ընդգծում է, որ պատվիրակությանը հաջողվել է վերջնականապես ճշտել հայ գաղթականների խնդրի վերաբերյալ օսմանյան հրամանատարության դիրքորոշումը, ինչպես նաև թուրքական վայրագությունների վերաբերյալ քննություն կատարելու արտոնություն է ստացել³¹: Իր հարցազրույցներից մեկում Հ. Թումանյանը հավելում է այն, որ Էսսադ փաշան պատրաստակամություն է հայտնել հայկական կողմի հետ վերսկսել առևտրական հարաբերությունները³²: Հետագա շաբաթները ցույց տվեցին, որ նույնիսկ վերջին երկու խոստումներն իրականություն չդարձան:

Ներկայացվածն առաջին դեպքն էր, երբ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը հանդես էր գալիս ոչ թե իր կամ հայկական (թեկուզ մեծ և հեղինակավոր) որևէ կազմակերպության, այլ անկախ հայկական պետության անունից: Նա փորձել է ամեն գնով պաշտպանել թուրքական ռազմակալության տակ գտնվող շրջանների հայ բնակչության անվտանգությունը: Կարող ենք արձանագրել, որ Հովհ. Թումանյանը փաստացի հանդիսացել է նորանկախ Հայաստանի Հանրապետության անդրանիկ դիվանագետներից մեկը՝ իր մյուս բախտակիցների նման այդ բնագավառում համապատասխան կրթություն և գործունեության փորձ չունենալով:

Գրականություն

Ավետիսյան Հ.Ա. 1997, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, «Բարձրագույն դպրոց», 436 էջ:

Խաչատրյան Ա. 2010, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, Հայաստանի ազգային արխիվի հրատ., 287 էջ:

³⁰ Մշակ, 9 յուլիսի 1918, N 131, Հայաստանի անկախության հռչակումը 2009, 110-111:

³¹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 290:

³² Հորիզոն, 9 յուլիսի 1918, N 133:

- Խատիսեան Ա. 1968, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, «Համազգային», 488 էջ:
- Կարապետյան Լ.Մ. 1992, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 256 էջ:
- Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս), փաստաթղթերի և նյութերի ժողովածու 2009, կազմող՝ Հ.Կ. Սուքիասյան, Երկրորդ հրատ., Հայաստանի ազգային արխիվի հրատ., Երևան, 251 էջ:
- Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու 2000, խմբագրությամբ՝ Գ.Ա. Գալոյանի և Վ.Ն. Ղազախեցյանի, Երևան, «Գիտություն», 455 էջ:
- Հայոց պատմություն, հ. IV, գիրք I 2010, Երևան, «Զանգակ 97», 800 էջ:
- Մելքոնյան Ա.Ա. 2003, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, «Զանգակ 97», 543 էջ:
- Սուքիասյան Հ. 2009, Երկու դրվագ Հովհաննես Թումանյանի հասարակական-քաղաքական գործունեությունից, «Ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր)», պրակ Թ, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 142-148:
- Սուքիասյան Հ. 2015, Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետության պատվիրակության գործունեության լուսաբանումը պատվիրակների օրագրություններում (1918 թ. հունիս-նոյեմբեր), «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ)» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ. հրատ., էջ 193-205:

ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԹՈՒՄՈՒՄ 1918 Թ. ՀՈՒԼԻՍԻՆ

Համո Սուքիասյան

1918 թ. հուլիսի սկզբին Բաթումում տեղի ունեցած հայ-թուրքական բանակցությունները պատմաբանների կողմից գիտական ուսումնասիրության չի արժանացել՝ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության և Օսմանյան կայսրության հարաբերություններին առնչվող այլ առանցքային խնդիրների:

Հայոց ազգային խորհուրդը հուլիսի 1-ին Սամսոն Հարությունյանի ղեկավարությամբ (անդամներ՝ Հովհաննես Թումանյան, Իվան Բաղդամյան, քարտուղար՝ Երվանդ Միրզոյանց) պատվիրակություն է ուղարկում Բաթում՝ Կովկասյան ռազմաճակատի օսմանյան բանակների հրամանատար Էսսադ փաշայի հետ քննարկելու հայ-թուրքական հարաբերություններում առկա խնդիրները: Դրանք էին՝ Բաթումի հունիսի 4-ի պայմանագրով որոշված ՀՀ սահմաններից թուրքական զորքերի դուրսբերմանը, երկաթուղագիծը ՀՀ-ին

փոխանցելուն, հայ գաղթականներին սեփական բնակավայրերը վերադարձնելուն, գրավված հայկական բնակավայրերում թուրքերի կատարած թալանին ու ջարդերին առնչվող հարցերը: Բանակցությունների ընթացքում Էսսադ փաշան տարբեր պատրվակներով խուսափում է լուծում տալ հայկական կողմի առաջ քաշած հարցերին: Հուլիսի 5-ին հայ պատվիրակները ձեռնունայն վերադառնում են Թիֆլիս: Պատվիրակության առաքելության միակ արդյունքը հայությանը հուզող խնդիրների առթիվ թուրքական կողմի դիրքորոշումներին ծանոթանալն էր: Սա նաև միակ դեպքն էր, երբ բանաստեղծ Հ. Թումանյանը հանդես էր գալիս հայկական անկախ պետության անունից՝ փաստացի հանդիսանալով նրա առաջին դիվանագետներից մեկը:

Բանալի բաներ՝ հայ-թուրքական բանակցություններ, Բաթումի պայմանագիր, Էսսադ փաշա, Հովհաննես Թումանյան, Հայոց ազգային խորհրդի պատվիրակություն, հունիսի 4-ի հայ-թուրքական պայմանագիր, հայ գաղթականներ:

АРМЯНО-ТУРЕЦКИЕ ПЕРЕГОВОРЫ В БАТУМЕ В ИЮЛЕ 1918 Г.

Амо Сукиасян

Состоявшиеся в начале июля 1918 г. в Батуме армяно-турецкие переговоры не стали предметом научного исследования, в отличие от других ключевых проблем, касающихся отношений Республики Армения и Османской империи.

1-ого июля Армянский национальный совет направил делегацию во главе с Самсоном Арутуняном (члены – Ованес Туманян, Иван Баграмян, секретарь – Ерванд Мирзоянц) в Батум для обсуждения с командующим османскими дивизиями на Кавказском фронте Эссад пашой нерешенных вопросов в армяно-турецких отношениях, в числе которых были вопросы о выводе османских дивизий с территории РА, что было указано в батумском армяно-турецком договоре от 4-го июня о передаче железной дороги РА, возвращении армянских беженцев в свои дома, об организованных турками грабежах и резне в оккупированных армянских поселениях. В ходе переговоров Эссад паша всячески уклонялся от ответа на выдвинутые армянской стороной вопросы. 5-го июля армянские делегаты вернулись в Тифлис, не добившись каких-либо существенных результатов. Армянская делегация всего лишь ознакомилась с позицией турецкой стороны по вопросам армян.

Ключевые слова – армяно-турецкие переговоры, Батумский договор, Эссад паша, Ованес Туманян, делегация Армянского национального совета, армяно-турецкий договор от 4-го июня, армянские беженцы.

ARMENIAN-TURKISH NEGOTIATIONS IN BATUM IN JULY 1918

Hamo Sukiasyan

The Armenian-Turkish negotiations held in Batum in early July haven't been studied by the historians, in contrast to other core issues regarding relations between the Republic of Armenia and the Ottoman Empire. On the 1st of July, the Armenian National Council sent a delegation led by Samson Harutyunyan (members: Hovhannes Tumanyan, Ivan Baghramyan, secretary Yervand Mirzoyants) to Batum to discuss unresolved issues in the Armenian-Turkish relations with the commander of the Ottoman divisions on the Caucasian front, Essad Pasha. Namely, questions about the withdrawal of Ottoman divisions from the territory of the Republic of Armenia, defined by the Armenian-Turkish agreement of Batum on June 4, the transfer of the railway to the Republic of Armenia, the return of Armenian refugees to their homes, the robberies and massacres organized by Turks in the occupied Armenian settlements. During the negotiations, Essad Pasha with different pretexts avoided solving the questions put forward by the Armenian side. On the 5th of July, the Armenian delegates returned empty-handed to Tbilissi. The only result of the mission of the Armenian delegation was to get acquainted with the position of the Turkish side regarding issues of concern to the Armenians. This was also the only case that Hovhannes Tumanyan spoke on behalf of independent Armenian state, in fact becoming one of the first diplomats.

Key words – Armenian-Turkish negotiations, agreement of Batum, Essad Pasha, Hovhannes Tumanyan, delegation of the Armenian National Council, the Armenian-Turkish agreement of June 4, Armenian refugees.